## ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

# ԽՆԿԱՐԿՎՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ

Իսկ հետո։ Հետո խաղաղ է ու հանգիստ։ Մարդիկ տքնում են եւ արարում։ Ժպտում են ու խայթում։ Հետո առօրեական կյանքն է իր հունով։ Եվ ՑԱՎ է երբ ԲԱՑԱԿԱՆԵՐԻԴ կարոտը միայն հարազատներիդ լացից կծկվող դեմքերը պիտի այլայլի։

Ծննդյան տոները նաեւ ձերն էր լինելու։ Եվ խնկարկման խորանին թե մենք ինչ էինք մրմնջալու, սակայն ինքնակերտման առանց ՔԵԶ։

Նահատակի պսակը դուք առաք ձեր գլխներին։ Դո՛ւք, որ տղամարդկային ձեր պահվածքով ապրողներիս հանգիստ կյանք վայելելու եւ Ծննդյան տոներին ինքնագոհ բաժակ բարձրացնելու հնարավորությունն ընձեռեցիք մեծահոգաբար։ Ու մեր խոնարհումը ձեզ մեղքներս քավելու պես մի բան է լինելու։ ՄԵՂՔ էլ չունենանք



ճանապարհին ձերն առավել իմաստալից էր. ու անշնչացած շուրթերով հայրենի հողը պագելու եւ նրա քաղցրությունը ձեզանով անելու նախանձախնդիրն եղաք ՈՒԺԵՂԻՆ գերի այս աշխարհում։ Հիմա՝ աղբյուր է փողոց է լռեցված կրակակետ է մոխիրների վերածված հայկական գյուղ է տեսանելի մի տեղում ձեզ նվիրված հուշաքարերն են՝ մեծ ու փոքր. «համեստ» ու «շքեղ»՝ խոնարհված ու «շաղ տված» ծաղիկներով։ Նաեւ՝ մարտական ընկերներիդ խոնարհ ու շփոթահար հայացքներով՝ - ուրիշները չգիտեմ, բայց մանկության մեր հուշ-պատառիկներն ու չարաճճիություններն ինչպե՞ս տանեմ սակայն այլեւս հուշ դարձած ձեր պայծառ ու արի կերպարները տխո՛ւր մի թախիծ է միշտ պարուրելու մեզ։

Նահատակ-զինվորներ։ Ձեզ անդրադառնալիս ինչպե՞ս չհիշենք ՎԱՐԴԵՏԻ խոսքերը. «Այս կյանքը մի անգամ էլ է լինում էս մե՛ծ, կանաչ աշխարհում արեւի տակ մի ծաղիկ մի օր ծաղկում է ու՝ պրծավ. աշխարհը նրա համար այլեւս չկա։ Հող ու խավար»։

Դուք եղաք այդ ծաղիկը։

Իսկ խավարում մենք ենք հայտնվելու, եթե ԳԵԹ ՄԻ ՊԱՀ փորձենք մոռացության մատնել ձեր կենդանի ներկայությունը մեր կողքին։

Դ. Ս.